

Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼՐՋՄԻՏ ՊԱՏՄԱԲԱՆԸ ԵՎ ՀՄԱՅԻՉ ՄԱՐԴԸ՝ ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

1983 թվականի հունվարի 1-ին, հիսունինը տարեկան հասակում, վախճանվեց ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների դոկտոր, Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Հայկ Գրիգորի Մելքոնյանը: Գործընկերները սովոր էին ամեն առավոտ նրան տեսնելու հանդարտ ու խոհուն Մատենադարանի աստիճաններով բարձրանալիս, վայելելու նրա մեղմիկ ժպիտը, հաճելի կրույցները, բայց առավել ևս հիանալու նրա աշխատանքային օրինակելի ճշտապահությամբ: Հիրավի Հ. Մելքոնյանին փնտրողը գիտեր, որ ժամը իննից մինչև մեկը նրան կարելի է գտնել Մատենադարանի ընթերցասրահի իր փոքրիկ գրասեղանի առջև՝ հակված հայերեն և ասորերեն գրքերի կույտի վրա: Եթե մեկ ուրիշի համար դա սովորական կարող է համարվել, ապա Հ. Մելքոնյանի դեպքում դա սխրանք էր, քանի որ բոլորն էլ գիտեին, որ վերջին տասը տարիներին նա աշխատում էր չափազանց վատառողջ վիճակում: Սակայն, չնայած այդ հանգամանքին, Հ. Մելքոնյանը տոկուն կամքի և աշխատանքային կարգապահության շնորհիվ այդ ընթացքում կարողացավ հասնել լուրջ գիտական նվաճումների:

Հայկ Մելքոնյանը ծնվել է 1923 թվականի դեկտեմբերի 25-ին Սիրիայի Հալեպ քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է քաղաքի Հայկազյան ազգային վեցամյա վարժարանում, որն ավարտել է 1936 թվականին: 1937—1942 թվականներին ուսումը շարունակել է Երուսաղեմի ժառանգավորաց դպրոցում, իսկ 1943 թվականին ընդունվել և 1945-ին ավարտել է Երուսաղեմի հոգևոր

ճեմարանը: 1946 թվականին Հ. Մելքոնյանը ծնողների հետ ներգաղթել է Սովետական Հայաստան և երեք տարի՝ 1946—1949 թթ., աշխատել Երևանի Հակոբ Հակոբյանի անվան դպրոցում որպես անգլերեն լեզվի ուսուցիչ: Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի պետական համալսարանում, որի բանասիրական ֆակուլտետն ընդունվել է 1946 և ավարտել է 1958 թվականին: 1959—1962 թվականներին ուսանել է ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում և ուսումնառության շրջանն անցկացրել Լենինգրադում, նշանավոր ասորագետ Ն. Վ. Պիգուլևսկայայի ղեկավարու-

թյան ներքո: 1962 թվականից անցել է աշխատանքի ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում՝ նախ որպես կրտսեր գիտական աշխատող, իսկ այնուհետև՝ մինչև կյանքի վերջը, որպես ավագ գիտական աշխատող: 1964 թվականին Հ. Մելքոնյանը պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ «Հայ-ասորական հարաբերությունները III—V դարերում» թեմայով, իսկ 1981-ին՝ դոկտորական դիսերտացիա՝ «Ադիաբենի պետությունը և Հայաստանը» թեմայով:

Հ. Մելքոնյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ-ասորական հարաբերությունների պատմության համեմատաբար քիչ ուսումնասիրված մի բնագավառը՝ քաղաքական և տնտեսական փոխառնչությունների հարցը: Նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայ-ասորական գրական հարաբերությունները քիչ թե շատ լուսաբանված են Հ. Տաշյանի, Ա. Վարդանյանի, Ն. Ակինյանի և այլոց աշխատություններում, իսկ եկեղեցական առնչությունները հիմնավորապես վեր են հանված Ե. Տեր-Մինասյանի գիտական հետազոտություններում: Այս նկատառումով, Հ. Մելքոնյանն իր առջև խնդիր էր դրել քաղաքական և տնտեսական հարցերի քննությամբ ամբողջացնել հայ-ասորական հարաբերությունների պատմության համակողմանի ուսումնասիրությունը:

Դեռևս իր առաջին գիտական մենագրության մեջ, որ վերնագրված է «Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III—V դդ.)», Հ. Մելքոնյանը հայկական, ասորական և բյուզանդական աղբյուրների հիման վրա հատուկ քննության է ենթարկել Հայաստանի և Ասորիքի քաղաքական-տնտեսական կապերի որոշ կողմերը: Մասնավորապես լուսաբանված են Հայաստանի և Եդեսիայի թագավորության (Օսրոյենե) հարաբերությունները մ. թ. II—III դարերում: Ցույց է տրված, որ Եդեսիայի Աբգար թագավորի հայացման ավանդույթը, որ վկայված է հայկական հնագույն աղբյուրներում, որոշակի պատմական հիմք ունի, քանի որ II դարում Եդեսիայի թագավորական գահին որոշ ժամանակով տիրել է հայ Պարթևների մի ճյուղը: Բավական տեղ է հատկացված Հայաստանի և ասորաբնակ երկրների՝ Ասորիքի, Միջագետքի առևտրական կապերին, որոնք սովորաբար ուղենիշ են հանդիսանում նաև մշակութային փոխառնչությունների ուսումնասիրման համար, քանի որ քրիստոնեության տարածումը հաճախ ընթացել է բանուկ առևտրական ճանապարհներով: Ասորիները հնում և վաղ միջնադարում հայտնի էին որպես հմուտ վաճառականներ, որոնք միջնորդի դեր էին խաղում հեռավոր արևելյան երկրների և Հռոմեական կայսրության միջև, նրանց քարավանները հասնում էին մինչև Հնդկաստան և Չինաստան, ուստի կարմանալի չէ, որ այդ ճանապարհի ողջ երկայնքով նկատվում են ասորական քրիստոնեական մշակույթի հետքերը: Հ. Մելքոնյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ տնտեսական-առևտրական հանգամանքները կարևոր դեր են խաղացել նաև Հայաստանում ասորի քարոզիչների ծավալած առաքելական գործունեության մեջ: Ըստ այդմ, քրիստոնեության թափանցումը Հայաստանի հարավային նահանգների ուղղությամբ բացատրվում է հայ-ասորական դարավոր քաղաքական և տնտեսական հարաբերությունների գոյության հանգամանքով:

Հայ-ասորական հարաբերությունների ուսումնասիրման բնագավառում կարևոր ներդրում պետք է համարել նաև Հ. Մելքոնյանի հաջորդ աշխատությունը՝ ասորական աղբյուրների հայերեն թարգմանության ստվարածավալ ժողովածուն, որը կազմում է «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի 8-րդ հատորը: Հանրահայտ է, որ ասորական աղբյուրները մեծ արժեք են ներկայացնում Մերձավոր Արևելքի երկրների և ժողովուրդների միջնադարյան պատմության ուսումնասիրման տեսակետից: Խորհրդային պատմագիտության մեջ այդ աղբյուրների գնահատման, գիտական արժեքավորման և գործնական կիրառության երախտիքը պատկանում է Ն. Վ. Պիգուլևսկայային: Շարունակելով այդ ավանդույթը, Հ. Մելքոնյանն իր գրքում հայերեն թարգմանությամբ ներկայացրել է հետևյալ չորս ասորական աղբյուրները. Մշիխա-Զեխայի «Ադիաբենի պատմությունը», Կեղծ-Յեսու Սյունակյացի «Ժամանակագրությունը», Կեղծ-Զաքարիա Հռետորի «Ժամանակագրությունը» և Հովհաննես Եփեսացու «Եկեղեցական պատմության» երրորդ՝ պահպանված մասը: Բոլոր նշված երկերն էլ պատկանում են մ. թ. VI դարին: Այսպիսի ընտրության անհրաժեշտությունը թելադրված է այն հանգամանքով, որ հայկական պատմագրությունը՝ այնքան հարուստ V դարում, հաջորդ հարյուրամյակում ոչ մի հուշարձան չի ստեղծել:

«Ադիաբենի պատմությունը» հետաքրքիր մանրամասներ է հաղորդում քրիստոնեական մշակույթի հնագույն կենտրոններից մեկի մասին, դրանով նպաստելով հարևան երկրներում, մասնավորապես Ադիաբենին սահմանակից Հայաստանում դրսևորված նմանօրինակ երևույթների պարզաբանմանը: Կեղծ-Յեսու Սյունակյացի և Կեղծ-Զաքարիա

Հռետորի ժամանակագրությունները V—VI դարերի պարսկա-բյուզանդական հարաբերություններին վերաբերող կարևորագույն աղբյուրների թվին են պատկանում, և քանի որ երկու հզոր կայսրությունների առճակատումը երկար տարիների ընթացքում տեղի էր ունենում Հայաստանում և Միջագետքում, ուստի այդ աղբյուրները ընդհանուր քաղաքական տվյալներից բացի որոշ տեղեկություններ են պարունակում նաև նշված երկրների ներքին կյանքի մասին: Ինչ վերաբերում է Հովհան Եփեսացու «Եկեղեցական պատմությանը», ապա նրանում նույնպես կարևոր տեղ է հատկացված պարսկա-բյուզանդական հարաբերություններին, սակայն արդեն հետհուստինիանոսյան ժամանակների վերաբերյալ: Բավմաթիվ էջեր են նվիրված նաև կայսրության արևելյան նահանգների միաբնակ քրիստոնյաների նկատմամբ Կոստանդնուպոլսի վարած դաժան քաղաքականության նկարագրությանը: Նշված հուշարձանների թարգմանություններին Հ. Մելքոնյանը կցել է հանգամանալից ծանոթագրություններ և համապատասխան պատմաբանասիրական ակնարկներ, որոնցում տրված է աղբյուրների պատմագիտական բնութագիրը և լուսաբանված մի շարք մասնակի խնդիրներ:

Աղբյուրագիտական այսպիսի հարուստ հիմքի վրա է գրված Հ. Մելքոնյանի երրորդ ծավալուն հետազոտությունը՝ «Ադիաբենի պետությունը և Հայաստանը» գիրքը, որը դրվատանքով է ընդունվել գիտական շրջանակներում: Այն նվիրված է Սելևկյան կայսրության քայքայումից հետո Ասորիքում և Հյուսիսային Միջագետքում առաջացած արամեական պետություններից մեկի՝ Ադիաբենի պատմությանը: Ինչպես այդ, այնպես նաև արամեական մյուս պետությունները՝ Օսրոյենեն, Պալմիրան և Նաբաթեան, թեև շուտով Հռոմի և Պարթևների կոհը դարձան, սակայն իրենց կարճատև գոյության ընթացքում նշանակալից դեր խաղացին միջազգային առևտրի ասպարեզում և հելլենիստական մշակույթի ստեղծման ու քրիստոնեության տարածման գործում:

Ժամանակակից սովետական և արտասահմանյան պատմագրության մեջ բավականաչափ ուսումնասիրված է Օսրոյենեի, Պալմիրայի և Նաբաթեայի պատմությունը, մինչդեռ Ադիաբենը անհրաժեշտ ուշադրության չի արժանացել հետազոտողների կողմից: Ահա այդ բացն է, որ համակողմանիորեն լրացնում է Հ. Մելքոնյանի մենագրությունը, որտեղ քննության են ենթարկված Ադիաբենի պետության սոցիալ-քաղաքական պատմության և հոգևոր-մշակութային կյանքի հարցերը: Աղբյուրների վերլուծությունը հեղինակին հանգեցրել է հետևյալ հիմնական եզրակացություններին.

Ադիաբենի կենտրոնը՝ Արբելա քաղաքը, որ հիշատակվում է ինչպես ասուրա-բաբելական, այնպես և աքեմենյան արձանագրություններում, կարևոր մշակութային-տնտեսական դեր է խաղացել Հյուսիսային Միջագետքում: Ադիաբենի քաղաքական վերելքն սկսվում է Սելևկյան կայսրության անկումից հետո. մ. թ. ա. 123 թվականին ստեղծվում է Ադիաբենի թագավորությունը, գոյատևելով մինչև մ. թ. II դարի սկիզբը: Միջազգային քաղաքականության մեջ Ադիաբենի թագավորությունը գործուն դեր է խաղացել հատկապես մ. թ ա. I—մ. թ. II դարերին՝ հռոմեա-պարթևական պատերազմների ժամանակ: Մենագրության՝ այդ շրջանին նվիրված գլուխներում Հ. Մելքոնյանը հանգամանորեն վերլուծել է փոքր ժողովուրդների նկատմամբ Պարթևների վարած քաղաքականությունը, Արշակունյաց արքունիքի և Ադիաբենի թագավորների բարդ հարաբերությունները, պարթևա-հայ-ադիաբենյան հակահռոմեական դաշնակցության ստեղծման փորձերը և այլն:

Ադիաբենի պատմությունը սերտորեն առընչվում է Հայաստանի պատմության հետ, որոնց փոխհարաբերությունները նշանավորվել են հռոմեական նվաճումների դեմ մղած համատեղ պայքարով: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Հ. Մելքոնյանի հետազոտության մեջ մեծ դեր է հատկացված հայ-ադիաբենյան սոցիալ-քաղաքական հարաբերություններին: Ուշադրության արժանի և հեղինակի դատողությունը հայ Բագրատունիների ադիաբենյան ծագման մասին, որոնց, ինչպես հայտի է, հայկական աղբյուրները հրեական ծագում են վերագրում: Հ. Մելքոնյանի համոզիչ կարծիքով դրա պատճառն այն է, որ Բագրատունիներն, ըստ երևույթին, հանդիսանում են հուդայականություն ընդունած ադիաբենցի իշխանական տներից մեկի շառավիղները: Ինչպես ապացուցում է հեղինակը, իրենց ակունքներով ադիաբենյան իրականության հետ են կապված նաև հին Հայաստանի սոցիալական կարգի այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են Մաղխազների, Զեռեսների և Սրիկաների գործակալությունները:

Հ. Մելքոնյանի կողմից հանգամանորեն լուսաբանված են նաև Ադիաբենի՝ որպես հուդայականության և վաղ քրիստոնեության կենտրոններից մեկի կրոնական-եկեղեցական կյանքի հարցերը: Երկրի եկեղեցական պատմությանը վերաբերող հիմնական աղբյուրի՝ «Մշիխա-Զեխայի Ադիաբենի պատ-

մության» մանրամասն քննությունը հեղինակին հնարավորություն է տվել պարզել Ադիաբենի միտրոպոլիտության և նրա ենթակա թեմերի գործունեության սահմանները, որ կարևոր նշանակություն ունի հարավային Հայաստանի և հյուսիս-արևմտյան Իրանի պատմական աշխարհագրության ուսումնասիրման համար:

Հ. Մելքոնյանը կյանքին հրաժեշտ տվեց իր ստեղծագործական գործունեության հասուն շրջանում, երբ լի էր գիտական նոր մտահղացումներով և հեռանկարային ծրագրերով: Արդեն ավարտել էր «Արևելից եկեղեցու ժողովոց գրքի» թարգմանությունը և ձեռնարկել Միքայել Ասորու «Ժամանակագրության» թարգմանությանը: Սակայն թեկուզ թվով քիչ, բայց բովանդակությամբ հարուստ տպագիր աշխատություններն արդեն նրան կայուն տեղ և հավերժ հիշատակ են ապահովել հայագիտության և ասորագիտության բնագավառում:

Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

1. Հայ-ասորական մշակութային հարաբերությունները IV—V դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 127—138:
2. IV դարի Միջագետքի և Հայաստանի սոցիալական շարժումների պատմությունից, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1963, № 12, էջ 21—34:
3. Армяно-сирийские связи в III—V вв. (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук), Ереван, 1964, 23 стр.
4. Армянская версия сирийской легенды об Абгаре, «Краткие сообщения Института народов Азии», вып. 86, Москва, 1965, стр. 45—50.
5. Житие Мар-Авгена и его новооткрытый древнеармянский перевод (VII Всесоюзная конференция византинистов, «Тезисы докладов»), Тбилиси, 1965.
6. Աստվածաշնչի ասորերեն և հայերեն թարգմանությունների պատմությունից, «Էջմիածին», 1966, № 11—12, էջ 40—50:
7. Армянский перевод жития Мар-Авгена, «Палестинский сборник», вып. 17(80), Ленинград, 1967, стр. 121—124.
8. Հայ Թովմասի ասորական վարքը, «Էջմիածին», 1968, № 3, էջ 55—63:
9. Движение пустынников в Месопотамии и Армении в IV—V вв. (IV Научная сессия по Древнему Востоку, «Тезисы докладов»), Ленинград, 1968.
10. Նոր աշխատություն Ագաթանգեղոսի պատմության մասին [Ա. Տեր-Ղևոնդյանի «Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Երևան, 1968» գրքի գրախոսությունն է], «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, № 8, էջ 98—99:
11. Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III—V դարեր), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970, 212 էջ: [Գրախոսություն]. *Ա. Տեր-Ղևոնդյան*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, № 4, էջ 105—107:
12. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. 8: Ասորական աղբյուրներ, գիրք Ա: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976, 478 էջ: [Գրախոսություն]. *Հ. Բալթիկյան*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 11, էջ 104—105: **Л. Тер-Петросян**, «Византийский Временник», т. 39, Москва, 1978, стр. 259—260.
13. [Գրախոսություն]. Լ. Հ. Տեր-Պետրոսյան, Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արևելիցը», «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, № 5, էջ 109—110:
14. [Գրախոսություն]. *Michel van Esbroeck*, Le résumé syriaque de l'Agathange, „Analecta Bollandiana", t. 95, fasc. 3—4, Bruxelles, 1977, p. 291—358. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1978, № 8, էջ 108—111:
15. Ասորական աղբյուրները Հայ Եկեղեցու մասին, «Էջմիածին», 1978, № 7, էջ 49—56, № 10—12, էջ 173—180:
16. Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980, 275 էջ: [Գրախոսություն]. *Հ. Բալթիկյան*, «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 281—283: *Ա. Տեր-Ղևոնդյան*, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 5, էջ 114—117:
17. Государство Аднабена и Армения (Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук), Ереван, 1981, 37 стр.
18. [Գրախոսություն]. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. 12: Ասորական աղբյուրներ, գիրք Բ: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982 (անտիպ):
19. Արևելից եկեղեցու «Ժողովոց գիրքը», թարգմանություն ասորերենից, առաջաբան և ծանոթագրություններ (անտիպ):
20. Միքայել Ասորի, ժամանակագրություն, թարգմանություն ասորերենից (անտիպ, թերի):

* Ցանկում չեն ընդգրկված օրագրերում և «Հայկական Սովետական Հանրագիտարանում» տպագրված հոդվածները:

*
* *

Հայկ Մելքոնյանը 1976 թվականից սկըսած, որպես Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, իր գործակցությունն է բերել Նորին Սրբության բոլոր ձեռնարկումներին: Նրա անձնվեր ծառայությունը Մայր Աթոռում արժանացել է Ամենայն Հայոց Հայրապետի բարձր գնահատանքին և օրհնությանը:

1981 թվականին, Հայոց Հայրապետի հրավերով, նա եղել է Մայր Աթոռում հրատարակության պատրաստվող Աստվածաշնչի արևելահայերեն նոր թարգմանության խմբագրական մարմնի անդամ, իսկ 1982 թվականին՝ «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի անդամ:

Հայկ Մելքոնյանի մահվան առթիվ Հայոց Հայրապետը հանգուցյալի ընտանիքին և հարազատներին ուղղեց 3 հունվար 1983 թվականի հետևյալ ցավակցական գիրը.

«Խոր վշտով է, որ գրի ենք առնում սույն տողերը Ձեզ ներկայացնելու համար Մեր ցավակցությունը Ձեր ամուսնու՝ Հայկ Մելքոնյանի վաղաժամ մահվան առթիվ: Պատմաբան Հայկ Մելքոնյանը իր գիտական աշխատություններով կարևոր նպաստ էր բերել հայ պատմագիտության ասպարեզում, իսկ վերջին տարիներին իր ծառայություններն էր մատուցում նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, իբրև գործոն անդամը Գերագույն Հոգևոր Խորհրդի և «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի:

Նրա անժամանակ վախճանումը վշտալի կորուստ է նաև Մայր Աթոռիս և անձամբ Մեզ համար: Մենք բոլորս բարձրորեն գնահատում էինք նրա գիտական ձեռնհասությունը, նրա նվիրվածությունը Հայաստանյայց Եկեղեցուն և Սուրբ Էջմիածնին, ջերմապես գնահատում էինք նրա անբասիր ազնիվ նկարագիրը և հեզահամբույր ոգին:

Շատ, շատ ենք ափսոսում, որ զրկվեցինք նրա օգտաշատ գործակցությունից, նրա բարեհոգի ներկայությունից:

Սրտանց աղոթում ենք Հայկ Մելքոնյանի տառապյալ հոգու խաղաղության համար:

Օրհնություն նրա վաստակին, նրա կյանքին, նրա հիշատակին: Եվ Հոգվո մխիթարություն Ձեզ՝ սգակիր տիկին, և բոլոր հարազատներին»: